ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 24242.9 մլն դրամ՝ պլանավորված 22600.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.3 տոկոսով կամ 1642.9 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 4.3 տոկոսով կամ 997.7 մլն դրամով:

Մայիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4542.7 մլն դրամ՝ պլանավորված 3900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 16.5 տոկոսով կամ 642.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.7 տոկոսով կամ 365.3 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 169 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 11 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 31 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 551 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 21 ստուգում՝ 550 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 2, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 3 ու վարձու աշխատողների չձևակերպման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 113 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 89-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 1-ը՝ ելակետային տվյալների ու դրանց ուղղիչ գործակիցների ճշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 17 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 10 հայցադիմում՝ 237.0 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են բռնագանձման հայցերով 1 գործ՝ 1663.5 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրության հայցերով 7 գործ՝ 190.0 հազ. դրամ գումարով և 1 սնանկության գործ՝ 1832.5 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 120 վարչական գործով սահմանվել է 1.5 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7144 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6577:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 55 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մայիս ամսում կատարվել է վերադարձ 67 վարձու աշխատողի՝ 9.5 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 50 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Մշակվել և ԱՀ կառավարության ու Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել 2019թ. հուլիսի 1-ից Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումն ապահովող օրինագծերի փաթեթը, ինչպես նաև հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված հարկային օրինագծերի փաթեթը:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 31-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում նախարարության չորս աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հետ կապված հարցերի քննարկման նպատակով նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ:

Մայիս ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին է ներկայացվել 1 դիմում-գանգատ, որը բավարարվել է մասնակիորեն:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում մեկնարկել են Արցախի Հանրապետության Հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները, որոնցում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման նպատակով զանգվածային լրատվամիջոցներով ներկայացվել են իրազեկման բնույթի հայտարարություններ:

Մայիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 210, ելքագրվել՝ 109 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**